ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 հոկտեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

148
(2628)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 115



«Մենք խնդիր ենք մեր առաջ դրել, որ Հայաստանը պետք է լինի բռնությունից զերծ հանրություն»: Սա ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքերն են՝ ասված 2019 թվականի դեկտեմբերի 12-ին: Գրեթե երկու տարի անց՝ 2022 թվականի դեկտեմբերի 17-ին, իր տան բակում ծեծի է ենթարկվել հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանը: Երկու տարի առաջ Փաշինյանը նաեւ ասում էր, որ Հայաստանի Հանրապետության որեւէ քաղաքացի չպետք է ենթարկվի բռնության. «Եթե մենք գնանք բռնության լեգիտիմացման թեկուզ տեղային ճանապարհով, մենք ուրիշ տեղ կհասնենք: Ոմանց դուր չեն գալիս բոյովները, ոմանց դուր չեն գալիս ցածրահասակները, ոմանց դուր չեն գալիս ժուլյեն ուտողները, ոմանց՝ քյաբաբ ուտողները, եւ այլն: Որեւէ մեկի նկատմամբ բռնություն չպետք է գործադրվի»: Ավելին՝ Փաշինյանը նաեւ կարեւորում եւ ընդգծում էր, որ Հայաստանի Հանրապետությունում բռնությունը կոռուպցիայի նման պետք է արմատախիլ արվի: «Ես ուզում եմ արձանագրել՝ անկախ որեւէ կոնվենցիայից՝ Հայաստանի Հանրապետությունում որեւէ մեկի նկատմամբ բռնություն չպետք է գործադրվի», - եզրափակել էր նա: Այժմ ունենք մի իրավիճակ, երբ իշխանություններին հակադիր կարծիք արտահայտող գործիչը ծեծի է ենթարկվել իր տան բակում, իսկ իշխանությունները, այդ թվում՝ Փաշինյանը, լուռ են: Դատապարտող որեւէ հայտարարություն իշխանությունը չի հնչեցրել, մինչ օրվա ավարտը դեռ իրավապահներն էլ չէին պարզել՝ ովքեր են եղել ծեծողները:



Անխորդ շաբաթ օրը՝ հոկտեմբերի 15-ին, Վանո Սիրադեղյանի մահվան մեկ տարվա հիշատակի արարողությունն է տեղի ունեցել: Սիրադեղյանի հարազատների ու ընկերների շատ նեղ շրջանակ հավաքվել է հայտնի գործչի հայրենի Կոթի գյուղում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ գրող, հրապարակախոս Վանո Սիրադեղյանի տարելիցի ու հիշատակի արարողութունը կինը՝ Ռուզան Տոնոյանն է կազմակերպել: Մեզ հայտնի դարձավ, որ տարելիցի արարողությանը բավականին սահմանափակ թվով մարդիկ են ներկա եղել՝ մոտ 50-60 մարդ. նախկին դաշնակցական, այժմ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աղվան Վարդանյանն է եղել, «Սարդարապատ» հուշահամալիրի նախկին տնօրեն Կարեն Արիստակեսյանը, Սիրադեղյանի ընտանիքի անդամները, հարազատները: Մեզ ասացին, որ «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունից որեւէ մեկը ներկա չի եղել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում կուսակցության փոխնախագահ Լեւոն Ջուրաբյանն ասաց. «Ռուզան Տոնոյանը մեզ ասաց, որ դա ընտանիքի ցանկությունն է եղել՝ ընտանեկան նեղ միջավայրում հավաքվել, հիշել: Դրանով է պայմանավորված, որ մեզ տեղյակ չեն պահել»: Իշխանության ներկայացուցիչներ կամ պետական այրեր, պաշտոնյաներ նույնպես ներկա չեն եղել: Տեղեկացանք, որ գրող, հրապարակախոս Վանո Սիրադեղյանի շիրիմը պատրաստ չի եղել, շինարարական որոշ աշխատանքներ արված են եղել, բայց այն ավարտուն տեսք չի ունեցել: Գերեզմանաքար կամ հուշաքար-հուշարձան նույնպես տեղադրված չի եղել: Հիշեցնենք, որ վերջին 20 տարիներին Հայաստանից դուրս բնակվող Սիրադեղյանը 75 տարեկանում էր մահացել արտերկրում:

Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք դատարաններում բազմապիսի վերաձեւավորումներ եղան: Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանի ջանքերով առանձնացան դատավորներ, որոնք քննում են բացառապես մինչդատական վարույթների գործերը: Մասնագիտական հանրույթը այդ դատավորներին որակել է իբրեւ իշխանության համար կալանք տվող դատավորներ: Եւ, ահա, այդպիսի դատավորներից մեկը՝ Արուսյակ Ալեքսանյանը, որ հոկտեմբերի 17-ին ձերբակալվեց, թեեւ իշխանությունների հրահանգները անվրեպ կատարել է, բայց դարձավ նույն իշխանության համար կոռուպցիայի դեմ պայքարի վիճակագրություն: Վանաձորի հաղթած քաղաքապետ Մամիկոն Ասլանյանին, հասարակական գործիչ Ավետիք Չալաբյանին, պրոդյուսեր Արմեն Գրիգորյանին իշխանության պատվերով կալանավորած դատավոր Ալեքսանյանին կալանավորելուց առաջ ՀՀ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանին իրավապահները նախապես տեղյակ են պահել: «Ժողովուրդ» օրաթերթը իր լավատեղյակ աղբյուրներից տեղեկացավ, որ նախնական համաձայնություն ԲԴԽ նախագահը տվել է իրավապահներին, որ ԲԴԽ-ն կթույլատրի կալանավորել դատավորին: Եւ այդ վստահությամբ էլ երեկ երեկոյան սկսվեց դատավորի խափանման միջոցի վերաբերյալ միջնորդության քննարկումը: Ճակատագրի հեգնանքով իր գործընկերոջը կալանավորելու կամ ազատ արձակելու հարցը քննում էր «կալանք տվող» մեկ այլ դատավոր Արշակ Մաթեւոսյանը: Երեկ՝ թերթը տպարան ուղարկելու ժամանակ, դեռ որոշում առկա չէր:

Հայկական ավանդական շամպայն առաջիկայում, հնարավոր է, վաճառքի չլինի: «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն են դիմել Երեւանի շամպայն գինիների գործարանի աշխատակիցները՝ տեղեկացնելով, որ արդեն չորս ամիս է, ինչ աշխատավարձ չեն ստանում. «Մայիսից հետո աշխատավարձ չենք ստացել, արդեն չորս ամիս է՝ գործարանը մատնված է անգործության, ցիստերները քանդում, մաս-մաս վաճառում են: Երջանկահիշատակ Վերսանդ Հակոբյանը կարողանում էր պահել գործարանը, նրա մահից հետո ամեն ինչ գլխիվայր շուռ է եկել»: Մեկ այլ աշխատակից էլ ահազանգեց. «Ցիստերները մոնտաժում եւ որպես լոմ վաճառում են: Դրանով գործարանը խաղող էլ է մթերել մոտ 1000 տոննա, եւ մարդիկ չգիտեն, թե այդ խաղողն ինչ են անելու, որտեղ են պահելու, որտեղ են կոնյակի սպիրտ սարքելու»: Մեզ ահազանգած քաղաքացիների խոսքերով՝ Հակոբյաններին պատկանող «Գարանտ սերվիս»-ի աշխատողները եւս աշխատավարձ չեն ստացել: Նշենք, որ 2022 թվականի հուլիսին մահացել է ընկերության հիմնադիր Վերսանդ Հակոբյանը, եւ նրա մահից հետո գործարանի կառավարմամբ զբաղվում է եղբայրը՝ Հրայր Հակոբյանը: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Հրայր Հակոբյանի հետ. «Ղալաթ են արել, որ նման բան են ասել: Գործարանը չի փակվելու, մենք ապրանք ենք արտահանում: Մեզ մոտ ոչ թե նորմալ է, այլ ավելի քան նորմալ է. նոր արտադրություն ենք դնում: Մենք ցիստերները հանել ենք, որ նոր «լինյա» դնենք, այլումինե տակառները գինեգործությունից հանվել են, դրանք հանվել են ու դրսում դրվել, ոչ թե վաճառքի համար են: Իսկ աշխատավարձը տրվում է նորմալ ժամանակին. մի քիչ ուշացում եղել է, կկարգավորենք», - նշեց գործարանի փաստացի ղեկավարը: Մենք կհետեւենք զարգացումներին՝ հասկանալու համար՝ իրապես աշխատակիցների իրավունքները չեն ոտնահարվում:

ՀՕԳՈՒՏ ԲԱՔՎԻ

«ԲԱՐԻ ԿԱՄՔԸ» ՋԵՆՔԻ ԿՎԵՐԱԾԻ

«Լեռնային Ղարաբաղում ականների խնդիրը լուծելու համար գրեթե 30 տարի կպահանջվի»,- օրերս հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն ու ստնեղել՝ գործընթացն ավարտին հասցնելու համար 25 միլիարդ դոլար կպահանջվի:

«Ադրբեջանն աշխարհում ականներով ամենաաղտոտված երկրների շարքում է: Նախնական հաշվարկներով՝ Հայաստանը մեկ միլիոնից ավելի ական է տեղադրել: Միջազգային փորձագետների կարծիքով՝ ականների խնդիրը լուծելու համար Ադրբեջանից կպահանջվի գրեթե 30 տարի եւ 25 միլիարդ դոլար»,- Աստանայում ընթացող Ասիայի փոխգործակցության եւ վստահության միջոցների ամրապնդման համաժողովի շրջանակում ասել է Ալիեւը:

Ռազմական փորձագետ, «Հենակետ» վերլուծական կենտրոնի ղեկավար Վիտալի Մանգասարյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է, որ Ալիեւի ներկայացրած թվերն իրականության հետ մոտավոր կամ անգամ չնչին աղերսներ ունեն: Ականները, նրա փոխանցմամբ, հիմնականում՝ շփման գծի երկայնքով, հազվադեպ էլ թիկունքում են շարված եղել: Մանգասարյանը վստահ է՝ Ալիեւը, ականապատ տարածքների մասին ճոխ թվեր ներկայացնելով, ավելի շատ ներքաղաքական ինչ-ինչ հարցեր է լուծում: Ադրբեջանը 44-օրյա պատերազմից հետո իր վերահսկողության տակ անցած տարածքները վերաբնակեցնելու խնդիր ունի, իսկ ականների թեման վերաբնակեցման գործընթացը ձգձգելու լավ պատրվակ կարող է լինել: «Ալիեւն ականների թեման փորձում է պատրվակ օգտագործել՝ ցույց տալու համար, որ մոտակա 20-30 տարիների ընթացքում Արցախի՝ իրենց վերահսկողությոն տակ անցած տարածքներում մարդկանց վերաբնակեցման խնդիրը լուծել չի հաջողվելու: Դա, այսպես ասած, բավական բարենպաստ ապահովագրում է իր համար»,- մեզ հետ զրույցում ներկայացնում է Մանգասարյանը:

44-օրյա պատերազմից հետո պաշտոնական Երեւանը մի քանի անգամ է Բաքվին ականապատ տարածքների քարտեզներ ներկայացրել: Ըստ տարածված խոսակցությունների՝ Հայաստանն Ադրբեջանին քարտեզներ է տրամադրել, ինչին ի պատասխան՝ Բաքուն Երեւանին մի քանի ռազմագերի է վերադարձրել: Դրանք, սակայն, սոսկ խոսակցություններ են եղել: «Հենակետ» վերլուծական կենտրոնի ղեկավարը հիշեցնում է՝ թե՛ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, թե՛ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը բազմիցս են հայտարարել՝ Արցախի՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքների ականապատման քարտեզները պաշտոնական Երեւանը Բաքվին որպես բարի կամքի դրսեւորում է տվել: Բայց բարի կամքից անդին, մեր զրուցակցի կարծիքով, նման քարտեզներ տրամադրելով՝ օգնում ենք հակառակորդին:

«Նմանօրինակ քարտեզները իրենց մեջ ռազմական ու պետական գաղտնիք համարվող տեղեկատվություն են պարունակել, ու ստացվում է, որ մենք ադրբեջանցիներին անուղղակիորեն օգնում ենք: Ինչպես՝ բացատրեմ. Բաքուն, որ բավական մեծ ռեսուրսներ՝ ժամանակ ու ֆինանսներ պետք է ծախսեր, որպեսզի Արցախի՝ իր վերահսկողության տակ անցած տարածքներում ականազերծման աշխատանքներ կատարի, այժմ կարող է խնայել թե՛ ժամանակը, թե՛ ֆինանսները»,- ընդգծում է նա:

Ռազմական փորձագետն այն համոզմանն է, որ ականապատ քարտեզների գումարները խնայելով՝ պաշտոնական Բաքուն այդ միջոցներն օգտագործելու է տարբեր տեսակի ու տրամաչափի զենք-զինամթերքներ ձեռք բերելու համար ու դրանք ինչ-որ ժամանակ մեր դեմ կիրառի:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԱՂԵՐՍ ՉՈՒՆԻ

ՆՈՒՅՆԱՆՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արցախում գրանցված «Միասնական հայրենիք» կուսակցությունը որեւէ աղերս չունի հայաստանյան նույնանուն կուսակցության հետ: ArmLur.am-ի հետ զրույցում ասում է Արցախի Ազգային ժողովի «Միասնական հայրենիք» խմբակցության պատգամավոր, խորհրդարանի պաշտպանության, անվտանգության եւ օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Մեյրան Հայրապետյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի՝ հոկտեմբերի 13-ին լույս տեսած «Ինչի՞ց են վախեցած Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպած ուժերը» վերտառությամբ հոդվածում նույնպես իրականում շփոթմունք էր տեղի ունեցել, ու Հայաստանում գրանցված «Միասնական հայրենիք» կուսակցության ներկայացուցիչ Մհեր Տերտերյանը Սամվել Բաբայանի կուսակից էր ներկայացվել:

«Արցախի Հանրապետությունում գրանցված ու գործող խորհրդարանական երկրորդ ուժի, Սամվել Բաբայանի ստեղծած «Միասնական հայրենիք» կուսակցության հետ Մհեր Տերտերյանը որեւէ աղերս չունի: Մենք որեւէ առնչություն չունենք իրար հետ: Մենք մեր կուսակցությունը հիմնել եք, ինչից ամիսներ, եթե ոչ մեկ տարի անց նոր նա նույնանուն կուսակցություն է հիմնել»,- մեզ հետ զրույցում ասաց Հայրապետյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը, ի դեպ, Տերտերյանի հետ փորձեց կապի դուրս գալ՝ հասկանալու, թե վարչապետ Փաշինյանի հետ հանդիպումների ժամանակ ինչ են քննարկում: Վերջինս, սակայն, ոչ միայն հրաժարվեց, այլ մի բան էլ «սեւ ցուցակ» գցեց մեզ:

Մհեր Տերտերյանին դեռ տարիներ առաջ՝ 2017-ի փետրվարի 15-ին, Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ» օրաթերթն էր անդրադարձել՝ հրապարակելով «Կարեն Կարապետյանի միլիոնատեր խորհրդականը՝ Ղազախստանից» վերտառությամբ հրապարկումը: Այդ ժամանակ, նշենք, Փաշինյանի հետ մշտապես հանդիպող Տերտերյանը Կարապետյանի՝ հասարակական հիմունքներով խորհրդական էր նշանակվել:

Նրա մասին վերջերս նաեւ մենք էինք ահազանգ ստացել:

ArmLur.am-ին Երեւանի բնակիչ Մարինե Համբարձումյանն էր դիմել ու փոխանցել, որ Դավիթաշեն վարչական շրջանի Զոր 1 թաղամասում գտնվող իր առանձնատունն ամիսներ առաջ վարձակալության է հանձնել, սակայն պայմանագիրը լրանալուց եւ այն սղելուց հետո վարձակալին չի կարողանում հանել տանից: Բնակչուհին մեզ պատմել էր, որ իր տանն այժմ գործունեություն է ծավալում (զենք է արտադրում) ՀՀ նախկին վարչապետ Կարեն Կարապետյանի նախկին խորհրդական Մհեր Տերտերյանը: Բնակելի թաղամասում, փաստորեն, զենք-զինամթերք ոչ միայն պահվում, այլեւ արտադրվում է, իսկ իրավապահները լուռ են:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԿՐԿԻՆ ՉԿԱՅԱՑԱՎ

Երեկ Սիսիան համայնքում պետք է տեղի ունենար ավագանու նիստը, որի ժամանակ նախատեսված էր իրականացնել ՔՊ-ական Արմեն Հակոբջանյանի երդման արարողությունը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ինչպես առաջին անգամ, նաեւ այս անգամ Արմեն Հակոբջանյանին չհաջողվեց երդվել եւ ստանձնել համայնքի ղեկավարի լիազորությունները:

Հիշեցնենք, որ առաջին՝ հոկտեմբերի 15-ին նշանակված նիստը կրկին քվորում չլինելու պատճառով չէր կայացել:

Ավագանու 4 մանդատից նախ հրաժարվել էր «Ապրելու երկիր» խմբակցությունը՝ հայտարարելով, որ նպատակահարմար չի համարում իր գործունեությունը գործող ավագանու կազմում: Իսկ երկու օր անց՝ հոկտեմբերի 14-ին, մանդատներից հրաժարվելու մասին հայտարարեցին նաեւ «Աշխատանք եւ արդարություն» եւ «Մեկ Հայաստան» խմբակցությունները, որոնք ընդհանուր ունեին 7 մանդատ: Հավելենք, որ Սիսիան խոշորացված համայնքում ավագանու առաջին նիստին՝ համայնքապետի ընտրության երկրորդ փուլում, համայնքի ղեկավար ընտրվեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու Արմեն Հակոբջանյանը: Ձայները բաշխվել էին հետեւյալ կերպ՝ Արմեն Հակոբջանյանը ստացել էր 9, իսկ «Աշխատանք եւ արդարություն» դաշինքի ընտրական ցուցակը գլխավորող Հայկ Առաքելյանը՝ 7 ձայն:

ԼՈՒՐՋ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

«Էդգար Ղազարյանին ծեծի են ենթարկել նրա տան մուտքի մոտ բաց դեմքով, առանց որեւէ բառ ասելու՝ հարվածելով հիմնականում գլխին»,- հայտարարություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Այս երեւույթը լուրջ մտահոգություն է առաջացնում:

Ներկայումս բժիշկները զբաղված են Ղազարյանի առողջական խնդիրներով. ինձ տեղեկացրել են, որ իրավապահ մարմինները նույնպես գտնվում են հիվանդանոցում եւ Ղազարյանից հաղորդում են ընդունում: Հետեւողական կլինեմ, որ միջադեպն ամբողջությամբ բացահայտվի, քանի որ խիստ անընդունելի է ընդդիմադիր գործչի նկատմամբ հաշվեհարդարը»,- գրել է Թովմասյանը: Ղազարյանը դուրս գրվելուց հետո պատմել է միջադեպի մասին. «Ես առավոտյան վարսավիրանոց էի գնացել, վերադառնում էի տուն: Երկու հոգի ինձ այնտեղ սպասում էին, ակնհայտ հետեւել էին իմ շարժին: Վերադառնալիս նույնիսկ նկատեցի իրենց՝ որպես շենքի կամ բնակիչ, կամ այցելու, բարեւեցի, անցա: Միանգամից հարձակվեցին, առանց շատ խոսելու սկսեցին տարբեր տեղերից հարվածել: Գցեցին գետնին ու շարունակեցին հարվածել, հատկապես՝ գլխի շրջանում: Սրանից հետո իրենք գնացին: Ես կանգնեցի շփոթված, պատահաբար մի մեքենա եկավ, ճանաչեցին ինձ: Ասաց՝ պարոն Ղազարյան, ես ճանաչում եմ Ձեզ, ի՞նչ է եղել, եկեք Ձեզ տանեմ հիվանդանոց, արնաշաղախ եք: Տեղափոխեցին «Շենգավիթ» ԲԿ, այնտեղից էլ շտապօգնության մեքենայով բերեցին «Էրեբունի» ԲԿ»:

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«Բուլղարիան կարեւորում է հարավկովկասյան տարածաշրջանում կայունության հաստատումը»,- հոկտեմբերի 18-ին հայտարարեց Բուլղարիայի նախագահ Ռումեն Ռադեւը պետական այցով Սոֆիա ժամանած Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի հետ հանդիպման արդյունքներով լրագրողների համար հայտարարության ժամանակ:

«Մեզ համար կարեւոր է կայունությունն ու անվտանգությունը Հարավային Կովկասում: Առանց կայունության չի կարող լինել բարգավաճում:

Մենք նաեւ սատարում ենք Հայաստանի եւ ԵՄ հարաբերություններին»,- ասաց նախագահ Ռադեւը:

Նա միջազգային հարաբերությունների ներկայիս դժվարին պայմաններում իսկական արժեք անվանեց հայ-բուլղարական բարեկամությունը՝ ընդգծելով. «Մենք, առաջնորդվելով մեր ժողովուրդների ցանկությամբ, պարտավոր ենք խորացնել ժամանակի փորձությունը անցած բարեկամության եւ համագործակցության վրա խարսխված կապերը»:

Բուլղարիայի նախագահը խոսեց տարբեր ոլորտներում երկկողմ հարաբերությունները խորացնելու անհրաժեշտության մասին: «Մենք կարող ենք եւ պետք է շատ ավելին անենք՝ երկկողմ հարաբերությունների իսկայական ներուժը զարգացնելու համար: Սա նշանակում է էլ ավելի ուժեղ փոխգործակցություն առեւտրի, տնտեսության, ներդրումների, տրանսպորտի, գիտության, կրթության եւ մշակույթի ոլորտներում»,- ասաց նա:

Ռադեւը կարեւորեց նաեւ համատեղ տնտեսական եւ առեւտրի պալատի ստեղծման մասին հուշագրի ստորագրումը՝ ընդգծելով, որ այն կնպաստի երկու երկրների բիզնեսի զարգացմանն ու մերձեցմանը:

Հայաստանի եւ Բուլղարիայի նախագահները ստորագրեցին նաեւ երկու երկրի միջեւ դիվանագիտական հարաբերությունների մասին համատեղ հայտարարություն՝ կարեւորելով դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի տարում նման խորհրդանշական այցը, որը պետք է լրացուցիչ խթան հաղորդի երկկողմ կապերին:

ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏՈՒՄ

ArmLur.am-ին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ քիչ առաջ պաշտոնից ազատման դիմում է ներկայացրել Երեւան քաղաքի Քննչական վարչության պետ Միեր Վարդանյանը: ՔԿ նախագահ Արգիշտի Քյարամյանը ստորագրել է վերջինիս ազատման դիմումը:

Նշենք, որ քննչական համակարգում Միեր Վարդանյանը հայտնի է որպես պրոֆեսիոնալ քննիչ:

Արթուր Աբրահամի հետ քավոր-սանիկական հարաբերությունների մեջ է:

ԱՐՑԱԽ

ՔՊ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին ամիսներին ՀՀ իշխանությունների կողմից հնչում են հայտարարություններ այն մասին, որ Արցախն արդեն պետք է ինքնուրույն բանակցի, այս դեպքում ՌԴ-ի եւ Ադրբեջանի հետ: Անգամ ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգում ընդգծվում է, որ հենց Հայաստանի Հանրապետությունն է հանդիսանում Արցախի անվտանգության երաշխավորը: Բացի այս, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ներկայացրել էր կուսակցության նախընտրական ծրագիրը, որում Արցախի հարցը, աղագան մեծ տեղ էր զբաղեցնում:

Խոստում

«Տարածաշրջանային կայունության հաստատումը եւ տարածաշրջանի ապաշրջափակումը Հայաստանի անվտանգության կարեւոր երաշխիք է եւ, հետեւաբար, պետք է լինի Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Միաժամանակ, այս գործընթացը չի կարող տեղի ունենալ Հայաստանի ու Արցախի այլ անվտանգային եւ կենսական շահերի հաշվին, այլ, հակառակը, պետք է նպաստի դրանց ամրապնդմանը»:

Իրականություն

Նիկոլ Փաշինյանը երեկ եւս խոսել է տարածաշրջանի ապաշրջափակման մասին եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին դիմելով՝ հիշեցրել է իր առաջարկը: Իրականությունը, սակայն, այն է, որ Հայաստանի սահմաններն այժմ անվտանգ չեն, եւ ադրբեջանական զորքերն առաջ են եկել եւ հաստատվել հենց Հայաստանի սահմանին:

Խոստում

«ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության դերը Ղարաբաղյան հակամարտության լուծման եւ Արցախի վերջնական կարգավիճակի հստակեցման, տարածաշրջանային կայունության ու անվտանգության ապահովման գործում առանցքային է, եւ Հայաստանը նպաստելու է այս ձեւաչափի արդյունավետ գործունեությանը»:

Իրականություն

ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահությունն ըստ էության չի գործում, եւ կարեւոր որոշումները կայացվում են, առանց ՌԴ-ի մասնակցության:

Խոստում

«Արտաքին եւ անվտանգային քաղաքականության գլխավոր առաջնահերթություններից են լինելու Ղարաբաղյան հակամարտության խաղաղ եւ համապարփակ կարգավորումը՝ արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման միջոցով Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումը, ինչպես նաեւ մշակութային ու կրոնական ժառանգության պահպանումը եւ հումանիտար խնդիրների լուծումը: Հայաստանի Հանրապետությունն օգտագործելու է իր ողջ ներուժը վերոնշյալ նպատակներին հասնելու համար՝ առաջնորդվելով մեր պետական շահերով եւ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության հրամայականով»:

Իրականություն

Հայաստանն Արցախին միայնակ է թողել, եւ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանի շուրթերով հայտարարել են, որ հենց Արցախը պետք է բանակցի Ադրբեջանի հետ ուղիղ:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրում առանձին հատված է առկա, որը վերնագրված է՝ «Արցախի հիմնախնդիր»: Այս բաժնում կարդում ենք.

● «Մոտակա տարիներին մեր գլխավոր խնդիրը պետք է լինի աղետալի պատերազմի հետեւանքների վերացումը, ինչպես նաեւ Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումն ու Ղարաբաղյան հակամարտության խաղաղ եւ համապարփակ կարգավորումը՝ հիմնված Արցախի ժողովրդի ինքնորոշման՝ առանց սահմանափակումների իրականացման վրա, որը բխում է Արցախի ժողովրդի՝ գոյութենական վտանգներին դիմակայելու անհրաժեշտությունից: Այն փաստը, որ մարդու իրավունքների զանգվածային խախտումների եւ զանգվածային ոճրագործությունների հետեւանքով հայաթափվել են Արցախի բոլոր այն տարածքները, որտեղ հաստատվել է ադրբեջանական վերահսկողություն, մատնանշում է, որ Արցախի ժողովուրդը չի կարող գոյատեւել Ադրբեջանի ենթակայության ներքո:

● Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումը տեսնում ենք Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացման եւ Արցախի կարգավիճակի վերջնական հստակեցման տեսքով՝ առաջնորդվելով «Անջատում՝ հանուն փրկության» սկզբունքով: «Անջատում՝ հանուն փրկության» սկզբունքն իրավունք է տալիս ժողովուրդներին ինչպես անջատվել որեւէ պետությունից, երբ առկա է խտրականության, մարդու իրավունքների լայնածավալ խախտումների կամ ցեղասպանության ռիսկ, այնպես էլ բացառում է միացումը մի պետության հետ, եթե միավորումը բերելու է վերը նշված հետեւանքներին:

● Արցախի հետպատերազմյան վերականգնումը, տնտեսական կյանքի աշխուժացումը, տեղահանված բնակչության սոցիալական խնդիրների լուծումը, մշակութային ու կրոնական ժառանգության պահպանումը լինելու են մեր ուշադրության կենտրոնում: Ձանք չենք խնայելու Արցախում արժանապատիվ եւ բարեկեցիկ կյանքի պայմանների ստեղծման համար: Այս նպատակներին հասնելու ենք Արցախի իշխանությունների հետ համագործակցության խորացման, ինչպես նաեւ Արցախի հետ փոխգործակցության նոր ձեւաչափերի ստեղծման միջոցով:

● Հայաստանի Հանրապետությունը շարունակելու է լինել Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորը եւ շարունակելու է աշխատել Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Խորացնելու ենք համագործակցությունը Արցախի հետ անվտանգային եւ ռազմական ոլորտներում: Մենք գործուն օժանդակություն ենք ցուցաբերելու Արցախին՝ Պաշտպանության բանակի վերակառուցման ու արդյունավետության բարձրացման գործընթացում:

● Մենք Արցախի անվտանգության ապահովման կարեւորագույն գործոն ենք համարում հակամարտության գոտում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ ուժերի երկարաժամկետ ներկայությունը: Երաշխավորելու ենք բոլոր անհրաժեշտ պայմանների գոյությունը խաղաղապահ առաքելության անխափան ու անխոչընդոտ գործունեության համար:

● Արցախյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման համար առանցքային կարեւորություն ենք տալիս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձեւաչափի շրջանակներում բովանդակային բանակցությունների անցկացմանը: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը հիմնախնդրի կարգավորման միակ ընդունված միջազգային ձեւաչափն է:

● Բանակցային գործընթացում Հայաստանի առաջնահերթություններից է լինելու այն տարածքների դեօկուպացիան, որի վրա ինքնորոշվել է Արցախի ժողովուրդը, նախեւառաջ նախկին ԼՂԻՄ բնակավայրերի վերադարձն Արցախի վերահսկողության ներքո խաղաղ, բանակցային ճանապարհով, ինչը հնարավորություն կտա տեղահանված անձանց վերադառնալ իրենց տները»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւան է ժամանել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի ժողովրդավարական գործընկերության հանձնախմբի (ԺԳՀ) նախագահ Դեյվիդ Փրայսի գլխավորած կոնգրեսական պատվիրակությունը: Դեյվիդ Փրայսին ուղեկցում են Ներկայացուցիչների պալատի անդամներ Դիանա Դեգեթը, Ջիմ Քուփերը եւ Էնդի Լեվինը: Այս ԱՄՆ կոնգրեսական պատվիրակությունը այցելել է Մեծ եղեռնի հուշահամալիր, ծաղիկներ խոնարհել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հոկտեմբերի 18-ին Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպել է Բրազիլիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆաբիո Վազ Պիտալուգայի հետ: Ախ քարտուղարը դեսպանի խնդրանքով ներկայացրել է սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից սկսված լայնածավալ ագրեսիան, դրա հետեւանքները, ինչպես նաեւ հայ-ադրբեջանական բանակցային գործընթացից որոշ մանրամասներ:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՆ

Դ. Ղուլյանը, հաղթահարելով Արդարադատության նախարարության «Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի հարցազրույցի փուլը, ընտրվել է տնօրենի պաշտոնում:

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

10 ԱՄԻՍ Է ՊԱՀՈՒՄ ԵՆ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Արուսյակ Ալեքսանյանի գլխավորությամբ, որոշեցին առաջ որոշել է բավարարել ՀՀ ՔԿ-ի միջնորդությունը՝ «Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքի Վանաձորի համայնքապետի թեկնածու Մամիկոն Ասլանյանին կալանավորելու վերաբերյալ:

Քննչական կոմիտեն հայտարարեց, որ առերեւույթ տվյալներ են ձեռք բերվել 2016թ. հոկտեմբերի 10-ից մինչեւ 2021թ. հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Մամիկոն Ասլանյանի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ անցնելու, անձնական այլ դրդումներով պաշտոնեական կեղծիք կատարելու՝ հանրորեն վտանգավոր արարքներ գործելու մի շարք հանգամանքների վերաբերյալ:

Մամիկոն Ասլանյանի պաշտպանները պնդում են, որ նրա նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում:

Հիշեցնենք, որ 2021 թվականի հոկտեմբերի 10-ին լրացավ Վանաձորի քաղաքապետ Մամիկոն Ասլանյանի պաշտոնավարման 5 տարին: Վանաձոր համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց Վանիկ Օհանյանը:

Դեկտեմբերի 5-ին անցկացված ՏԻՄ ընտրությունների արդյունքներով Լոռու մարզի Վանաձոր քաղաքում «Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքն ամենաշատ ձայներն է հավաքել՝ 12 810 քվե կամ 38.70 տոկոս ձայն:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը 25.06 տոկոս ձայն է ստացել, իսկ երրորդ տեղում է Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությունը՝ 14.53 տոկոսով: Ասել է թե՝ եթե տեղի ունենար ավագանու նիստ, եւ Մամոկոն Ասլանյանը կալանավորված չլիներ, ապա նա այժմ կզբաղեցներ Վանաձորի քաղաքապետի պաշտոնը: Ըստ էության, քաղաքական իշխանությունները, հասկանալով, որ պարտվել են, արագ կազմակերպեցին նրա նկատմամբ քրեական հետապնդումը, եւ արդեն 10 ամիս է, ինչ պահում են կալանքի տակ:

Քրեական գործը Հակակոռուպցիոն դատարանում է, եւ Մամիկոն Ասլանյանի փաստաբան Արտակ Ոսկանյանը ներկայացրեց, թե ինչ իրավիճակ է դատարանում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում ավարտվել է 46-ամյա տղամարդու կողմից իր կնոջը սպանելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ 2022 թվականի հունիսի 21-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի տներից մեկում կենցաղային հարցերի շուրջ վիճաբանություն է ծագել 46-ամյա տղամարդու եւ նրա որդու միջեւ: Վիճաբանությանը միջամտել է կինը, որի ընթացքում 46-ամյա տղամարդն ուղղակի դիտավորությամբ հարվածներ է հասցրել իր կնոջ գլխի շրջանին՝նրա առողջությանը պատճառելով ծանր վնաս, եւ ապօրինաբար վերջինիս զրկել կյանքից: Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ 46-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, որը համապատասխանում է գործող օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասին: Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

Քաղաքացի Մարիաննա Սահակյանը 2022 թվականի մայիսին Գլխավոր դատախազության շենքի մոտ հացադուլ էր հայտարարել՝ դժգոհելով անարդարությունից, հովանավորչությունից եւ խնդրելով քայլեր ձեռնարկել իր խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ:

Հետեւողական լինելով ենթադրյալ հանցավոր ոտնձգության արդյունքում տուժած անձի իրավունքների պաշտպանության հանձնառությանը՝դատախազական գործիքակազմի կիրառմամբ ձեռնարկվել են միջոցներ՝տեւական ժամանակ քննվող քրեական վարույթով առերեւույթ հանցանք կատարած անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու ուղղությամբ:

Դատախազական խմբի հսկողության ներքո գտնվող քրեական վարույթով կատարված վարույթային գործողությունների արդյունքում բացահայտվել է Մարիաննա Սահակյանից կացարանը հափշտակած անձի ինքնությունը:

Մասնավորապես, պարզվել է, որ Մ.Կ.-ն, դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելով, գոյություն չունեցող կեղծ տվյալներ ներկայացնելով, ինչպես նաեւ ապագայում սպասվող իրադարձությունների կապակցությամբ տուժողին մոլորության մեջ գցելով, ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու եւ համատեղ եկամուտ ստանալու պատրվակով տուժողից խաբեությամբ հափշտակել է վերջինիս բնակարանի վաճառքից գոյացած առանձնապես խոշոր չափերով՝ 40 հազար ԱՄՆ դոլարին համարժեք 19 մլն ՀՀ դրամը: Հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել Մ.Կ.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում, որն ուղարկվել է վարույթն իրականացնող մարմին՝ մեղադրանք ներկայացնելու համար: 16.10.2022 թ. Մ.Կ.-ն ձերբակալվել է. նույն օրը միջնորդություն է ներկայացվել Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին, որը, դատարանի որոշմամբ, բավարարվել է: Մ.Կ.-ի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

ԼՈՒՐԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության ռազմական հակահետախուզության դեպարտամենտի ծառայողները, շարունակելով հանցագործությունների դեմ պայքարի ուղղությամբ իրենց գործունեությունը, համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտել են պետական դավաճանության հերթական դեպքը:

Պարզվել է, որ ՀՀ քաղաքացի, ՊՆ N զորամասի պայմանագրային զինծառայող, շարքային նռնականետորդ Վ.Հ-ն, ծառայության բերումով առնչվելով պետական ու ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ, 2021 թվականի նոյեմբերին «Օդնոկլասնիկի» սոցիալական ցանցի միջոցով ծանոթացել է օտարերկրյա հատուկ ծառայության աշխատակից հանդիսացող, պայմանական անունով հանդես եկող անձի հետ եւ հավաքագրվելով վերջինիս կողմից՝վարձատրության դիմաց իր բջջային հեռախոսի «Վոթսափ» հավելվածի միջոցով 2021 թվականի նոյեմբերից մինչեւ 2022 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում հավաքել եւ հատուկ ծառայության ներկայացուցչին է հանձնել իր զորամասի տեղակայման վայրի, մարտական դիրքերի, դրանցում ծառայության անցկացման կարգի, զորամասի հաշվեկշռում գտնվող ավտոտեխնիկայի վերաբերյալ պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ, որոնց դիմաց օտարերկրյա հատուկ ծառայություններից երեք բանկային փոխանցումներով ստացել է 370 ԱՄՆ դոլար գումար՝ այդկերպ կատարելով պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության:

ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում հիշյալ պայմանագրային զինծառայողին ներկայացվել է մեղադրանք, դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

ՄԱՐԻԽՈՒՆՆԱ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Հոկտեմբերի 14-ին՝ գիշերվա ժամը 2:30-ին, պարեկային ծառայության Երեւանի գնդի 2-րդ գումարտակի 2-րդ վաշտի ոստիկանները Արտաշատի խճուղում ձերբակալել եւ, «Օպել» մակնիշի մեքենայով հանդերձ, ոստիկանության Շենգավիթի բաժին են տեղափոխել Արարատի մարզի Նիզամի գյուղի երկու բնակչի:

Ոստիկանությունից հայտնում են, որ կասկածանքը ապօրինի թմրամիջոց պահելը եւ օգտագործելն էր: 24-ամյա երիտասարդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է Մարիխուանայի նմանվող զանգված՝3 գրամից ավելի քաշով:

Նշանակվել է փորձաքննություն: Մեքենան տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք, երիտասարդները ներկայացվել են քննչական բաժին: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 17-ից 18-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 59 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԴ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆ ՄԵԿՆԵԼ

Միասնական սոցիալական ծառայությունների Նոյեմբերյանի կենտրոնը Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկատվություն է ստացել Նոյեմբերյան խոշորացված համայնքի Այրում քաղաքում բնակվող, հանրակրթական դպրոց չհաճախող մի ընտանիքի 5 երեխաների մասին: Այդ կենտրոնի տնօրեն Երվանդ Եգանյանից տեղեկացա, որ կենտրոնի աշխատակիցները՝Ե. Եգանյանի գլխավորությամբ, այց են կատարել Այրում քաղաքի նախկին հանրակացարանում բնակվող ընտանիքին: Ընտանիքում կան 3 եւ 4 տարեկան տղաներ եւ 9, 11 ու 12 տարեկան աղջիկներ: Նրանք հաշվառված են Վանաձոր քաղաքի քոթեջներից մեկում: Անչափահաս երեխաներից 2-ը կրում են իրենց հոր, 3-ը՝մոր ազգանունը: Նրանց ծնողները ապրում, աշխատում են Ռուսաստանի Դաշնությունում: Մինչեւ այս տարվա մայիսին Տավուշի մարզի Այրում քաղաք տեղափոխվելը երեխաներն ապրել են Աբովյանում բնակվող հորական տատի տանը, որը մայիսին սարեր գնալու, այնտեղ ուրիշի անասունները պահելու համար իր թոռներին տեղափոխել է Այրում՝ երեխաների մայրական տատի փոքրիկ բնակարան: Այրումի նախկին հանրակացարանում՝ երեխաների տատիկի՝ շուրջ 60 տարեկան, երկրորդ կարգի հաշմանդամ Աստղիկ Հակոբյանի մեկ սենյականոց բնակարանում, չկան լվացարան, զուգարան, բնակվելու համար տարրական պայմաններ: Ե. Եգանյանը հայտնեց, որ երեխաների վիճակը եւ այդ տեսարանը իրեն հուզել են, ինքը միջոցներ է ձեռնարկել երեխաների կարիքները հոգալու համար: Նոյեմբերյանից մի ՀԿ հոգացել է երեխաների հագուստի հարցը. Նոյեմբերյան քաղաքի «Գվարգին» սուպերմարկետը փոքրիկներին սնունդ է նվիրել: Ե. Եգանյանը կազմակերպել է, որ իր հայրենի Ոսկեպար գյուղից մի բարեգործ այդ ընտանիքին փայտ վառող վառարան եւ վառելափայտ տրամադրի: Ընտանիքի դպրոցահասակ երեխաներն արդեն Այրումի դպրոց են հաճախում: Այրումի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Գոհար Ջավախյանը հայտնեց, որ հոկտեմբերի 14-ին կայացած Նոյեմբերյանի համայնքապետարանի՝ խնամակալության եւ հոգեբարձության հանձնաժողովի նիստում 5 երեխաների հանդեպ խնամակալ է ճանաչվել նրանց տատ Աստղիկ Հակոբյանը: Ընտանիքին ընտանեկան նպաստ տրամադրելու համար հարկ է երեխաներին հաշվառել Միասնական սոցիալական ծառայությունների Նոյեմբերյանի կենտրոնում: Մանկահասակ երեխաների ծնողները Ռուսաստանում ուրիշի մոտ անասնապահությամբ են զբաղվում, նրանք պարբարաբար գումարներ են ուղարկում իրենց երեխաներին: Վերջիններիս տատ Աստղիկ Հակոբյանն ասում է, որ առաջիկայում երեխաների ծնողները գալու են Հայաստան, որպեսզի իրենց երեխաներին տեղափոխեն Ռուսաստան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔԱՂԱՔ՝ ՋՐՈՅԻՑ

ՓԱԽՍՏԱԿԱՆ ԴԱՐՁԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐ

2008 թվականի օգոստոսին տեղի ունեցած ռուս-վրացական պատերազմից հետո Հարավային Օսեթիան լքած փախստականների համար նոր բանակավայր է կառուցվել Վրաստանում՝ Մցխեթի շրջանում գտնվող Ծերովանի ավանում: Այս վայրում ռուս-վրացական պատերազմից հետո կառավարության կողմից կառուցվել են ավելի քան 2000 տնակներ, որտեղ մինչ այժմ էլ բնակվում են հազարավոր բնակիչներ: Բնակավայրը գտնվում է Թբիլիսի եւ Գորի քաղաքների միջեւ ընկած դաշտում, որը մինչ այդ ամայի էր:

ArmLur.am-ի թղթակիցը գտնվել է Ծերովանի բնակավայրում, կարողացել զրուցել պատերազմի հետեւանքով տեղահանված բնակիչների հետ եւ սեփական աչքերով տեսնել, թե ինչ է կատարվում այնտեղ: Բնակիչները մեզ հետ զրույցում որպես հիմնական խնդիր մատնանշում էին աշխատատեղերի բացակայությունը, հետեւաբար եւ ֆինանսական խնդիրների առկայությունը:

Նաիրան պատերազմից հետո այդտեղ է հաստատվել ամուսնու հետ, որն ունի հենաշարժողական խնդիրներ: Վերջինս մեզ հետ զրույցում նշեց, թե պետությունից աջակցություն են ստանում 47 լարիի չափով: Նրան հանդիպելու ժամանակ Նաիրան նոր էր վերադառնում բժշկական կենտրոնից, որտեղ զննումը, հիմնական բուժումներն ու դեղորայքն ամեն դեպքում բնակիչներին անվճար է տրամադրվում: Եվ չնայած կլինիկայի ծառայություններն անվճար են փախստականների համար, սակայն այն չի կարող մեծ օգնություն ցուցաբերել, բացի ախտորոշումից եւ հետազոտություններից: Այստեղ քիչ մարդիկ են գալիս, հիմնականում՝ Մցխեթա քաղաքի մոտ գտնվող պոլիկլինիկա գնալու ուղեգիր ստանալու համար: Այստեղ ապրող փախստականների համար նույնպես ատամնաբուժական ծառայություններն անվճար են:

Մենք հանդիպեցինք մի երիտասարդ կնոջ, որն ընտանիքի հետ այստեղ էր տեղափոխվել, երբ դեռ 9 տարեկան էր: «Հայրիկիս այս տարածքում տուն տվեցին, եւ մենք տեղափոխվեցինք այստեղ: Ես շատ բաներ չեմ հիշում այն ժամանակվանից, սակայն մայրս որոշեց, որ պետք է տեղափոխվել այնտեղից: Մեր տունը պատերազմի ժամանակ ավերվել է: Այս համայնքում լավ պայմաններ են, ես ինքս չեմ աշխատում, սակայն աշխատում է ամուսինս»,- ArmLur.am-ի հետ զրույցում պատմում է նա:

2008 թվականից առ այսօր այդ համայնքում բնակիչներից ոմանք շարունակում են ապրել կիսաբարվոք տնակներում, մի մասն էլ կարողացել է բարելավել իր պայմանները: Բայց շատերը, չնայած իրենց իրավիճակի բարդությանը, չեն կորցնում լավատեսությունը: Տեղահանվածների համար Թբիլիսիից 15 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ծերովանին իսկապես նոր տուն է դարձել: Բնակիչներից շատերը դեռեւս հույս ունեն, որ մի օր վերադառնալու են իրենց հայրենի գյուղը, որտեղ թողել են ընկերներ, բարեկամներ: Թամարա տատիկն ArmLur.am-ի հետ զրույցում նշում է՝ մինչեւ վերջին պահը չէր հավատում, թե պատերազմ է, եւ վերջիններից է եղել, որ լքել է տունը: Ընտանիքում, սակայն, այժմ չեն սիրում խոսել եւ հիշել պատերազմի մասին:

Հավելենք, որ օգոստոսյան պատերազմի օրերին միայն Հարավային Օսեթիայից փախել է ավելի քան 27 հազար քաղաքացի: Հենց նրանցից շատերի համար զրոյից կառուցվել է Ծերովանի համայնքը, որտեղ ապրում են տեղահանվածներ Հարավային Օսեթիայի տարբեր հատվածներից, կան անգամ հայ ընտանիքներ, որոնք փախստականի կարգավիճակով ապրում են այդտեղ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԶԱՅՐԱՑԱԾ ԵՆ

ՀՀ քաղաքացիները խիստ զայրացած են. պատճառը Հայաստանում գործող առեւտրային բանկերի վարած քաղաքականությունն է:

ArmLur.am-ը չի դադարում դժգոհություններ ստանալ քաղաքացիներից այն մասին, որ տարադրամի կանխիկացման համար բոլոր բանկերում գանձվում է 3 տոկոս միջնորդավճար: «Ես պարբերաբար ԱՄՆ-ից գումար եմ ստանում, աղջիկս ուղարկում է, ինքն այնտեղ վճարումներն անում է, ես այստեղ մաքուր ստանում եմ դոլարով: Այսօր գնացել եմ բանկ, որպեսզի ստանամ աղջկաս ուղարկած գումարը դոլարով, իսկ բանկում աշխատողն ասում է, որ եթե դոլարով եմ ուզում ստանալ, պետք է 3 տոկոսը վճարեմ: Ասում են՝ եթե ուզում ես դոլարով ստանալ, ապա հաշվարկվելու է 416 եւ 3 տոկոս պահումով: Ստացվում է՝ այս գործընթացում ես 70-75 դոլար կորցնում եմ. եթե սա թալան չէ, ի՞նչ է»,- իրավիճակը ArmLur.am-ին ներկայացրեց քաղաքացի Լեւոն Սարգսյանը:

Բացի այս, բանկում քաղաքացուն առաջարկել են գումարը ստանալ դրամով. «Եթե դրամով վերցնեմ, դոլարի փոխարժեքը հաշվարկելու են 404 դրամով: Ես ասում եմ՝ աղջի՛կ ջան, ինձ դրամ պետք չէ, դոլար եմ ուզում, երկրից գնալու եմ: Մի քանի ամիս առաջ էլ եմ ստացել առանց պահումների, եւ որեւէ խնդիր չի եղել»:

Բացի այս, նշենք, որ նույնն է նաեւ դոլարային հաշվից կանխիկացում կատարելիս: Այսինքն՝ քաղաքացին կանխիկացում կատարելու ժամանակ է միայն պարզել, որ բանկը 3 տոկոս է գանձել: Ստացվում է, որ ինքն իր սեփական հաշվից գումար հանելիս 3 տոկոսը տվել է բանկին՝ ոչնչի դիմաց:

Նշենք, որ այս խնդրի մասին քաղաքացիներին բանկերից տարբեր ժամանակներում պատճառաբանում են, որ արտարժույթը քիչ է. պատճառը ՌԴ-ի նկատմամբ կիրառված սանկցիաներն են, քանի որ Ռուսաստանում դոլարը քիչ է, եւ այսօր շատերը Հայաստանից են կանխիկ դոլարը փոխանցում ՌԴ: Եւ, ըստ որոշ տեղեկությունների, Կենտրոնական բանկը 3 տոկոսի չափով կանխիկացման միջնորդավճար է սահմանել՝ փորձելով արհեստականորեն խոչընդոտել ՌԴ տեղափոխվող դոլարի կանխիկացումը, բայց, արի ու տես, որ այս ամենի արդյունքում տուժում են ՀՀ շարքային քաղաքացիները:

Բացի այս, ՀՀ որոշ բանկեր հայտարարում են, որ սա ժամանակավոր բնույթ է կրում եւ պայմանավորված է համաշխարհային ճգնաժամային իրավիճակով: Թե մինչեւ երբ են շարունակելու բանկերն այս համաշխարհային ճգնաժամային ֆոնին գերշահույթներ ստանալ քաղաքացիների սեփական միջոցների հաշվին, հայտնի չէ: Բայց այն, որ առաջիկայում այս թեմայի շուրջ բողոքի մեծ ալիք է բարձրանալու, դա հաստատ է:

ՍՅՈՒՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 23-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԳՐԱՆՑՎԵԼ Է ԳՆԱՃ

Սեպտեմբեր ամսվա տվյալներով՝ Հայաստան Ռուսաստանի Դաշնության 780 հազար քաղաքացի է այցելել, իսկ Հայաստանից Ռուսաստան ՌԴ քաղաքացիություն ունեցող 740 հազար քաղաքացի է մեկնել: Այս պահին Հայաստանում գտնվող Ռուսաստանի Դաշնության անձնագիր ունեցող քաղաքացիների թիվը մոտ 40 հազար է: Միգրացիոն ծառայության՝ նախորդ 9 ամիսների տվյալները տնտեսագետ Կարեն Սարգսյանն է ներկայացնում՝ հավելելով՝ Հայաստանում հատկապես ծառայությունների մատուցման եւ առեւտրի ոլորտում 40 հազար քաղաքացու հաշվով լրացուցիչ պահանջարկ է առաջ եկել:

Թեեւ պետությունը գնաճը զսպելու համար որոշ քայլեր ձեռնարկում է, այնումենայնիվ, որոշակի ապրանքախմբերի գները շարունակում են աճել, իսկ սեպտեմբեր ամսվա տվյալներով՝ 9.9 տոկոս գնաճ է գրանցվել, ինչը, նախորդ ամսվա համեմատ, 0.6 տոկոսով է ավելի:

Տնտեսագետի փոխանցմամբ՝ հետկովիդյան ժամանակներից սկսած՝ օր օրի թանկացումներն ահագնանալ սկսել են հատկապես ռուս-ուկրաինական պատերազմից, այսինքն՝ այս տարվա գարնանից սկսած: Էներգակիրների, արեւծաղկի բուսայուղի, հացահատիկի ու այլ ապրանքների մատակարարը մեծամասամբ Ռուսաստանը, որոշ դեպքում նաեւ Ուկրաինան է: Այժմ, սակայն, մատակարարման այդ շղթան խաթարվել է, ինչն էլ համաշխարհային մակարդակով մեծ գնաճերի է հանգեցրել: Սարգսյանի դիտարկմամբ՝ Հայաստանում օգոստոսին որոշ չափով գնանկում է եղել, բայց քանի որ առ այսօր գնաճի ճնշումները շարունակվում են, դա քաղաքացու համար շոշափելի չի եղել:

Եթե դրամի արժեւորումն այս չափի չլիներ, ապա, ներկայացում է տնտեսագետ Սարգսյանը, գնաճն արձանագրվածի կրկնակիի չափով էր լինելու: Համեմատության համար ԵԱՏՄ անդամ մյուս երկրներն է օրինակ բերում՝ ընդգծելով՝ գնաճը Ռուսաստանում 14, Բելառուսում 16, Ղազախստանում 17 տոկոս է կազմել:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐ

Երեւանում կտեղադրվեն ՀՀ ժողովրդական արտիստ Կարեն Ջանիբեկյանի, հայ անվանի բանաստեղծ Եղիշե Չարենցի, գիտության վաստակավոր գործիչ Սերգեյ Համբարձումյանի, ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Լեւոն Հովհաննիսյանի, երկրաբանական եւ հանքաբանական գիտությունների թեկնածու Լեւոն Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակներ: Համապատասխան որոշումն ընդունվել է հոկտեմբերի 18-ին Երեւանի ավագանու նիստում:

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԼՐԱԳՐՈՂ

ՌԴ–ՈՒՄ ԼՐԱԳՐՈՂ ԼԻՆԵԼԸ ԱՆՎՏԱՆԳ ՉԷ

Վրաստանի ՆԳՆ կողմից հրապարակված տեղեկությունների համաձայն՝ մարտ-հունիս ամիսներին Վրաստան ժամանած ռուսների 18%-ը մնացել է երկրում. դա գրեթե 50 հազար մարդ է: 2019 թվականին այս ցուցանիշը կազմել է ընդամենը 5 տոկոս: Նույն տվյալներով՝ սեպտեմբերի 21-ից 30-ը ՌԴ առնվազն 68 հազար քաղաքացի է մուտք գործել երկիր, իսկ ավելի քան 45 հազարը հեռացել է: Վրաստան ժամանած մեծ թվով ՌԴ քաղաքացիներ հիմնական են հաստատվում այնտեղ, աշխատում հեռահար, անգամ նոր գրասենյակներ հիմնում եւ գնումներ կատարում:

Մասնավորապես, «Թրանսփարենսի ինթերնեշնլ-Վրաստան»-ի տվյալներով՝ մոտ 13500 ռուսական ընկերություններից կեսը գրանցվել է ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո: Մարտից հուլիս Վրաստանում գրանցվել է մինչեւ 6400 ռուսական ընկերություն, ինչը յոթ անգամ գերազանցում է նույնիսկ նախորդ տարվա տարեկան ցուցանիշները:

Վրաստանից իր աշխատանքն է կարողանում իրականացնել նաեւ ընդդիմադիր ռուս լրագրող Լյուբով Պոպովեցը: ArmLur.am-ի հետ զրույցում մեկնաբանեց, թե ինչու են որոշել հեռանալ ՌԴ-ից: «Պատերազմը սկսվելուց մեկ ամիս հետո ես հասկացա, որ չեմ կարող մնալ մի երկրում, որը սկսել է ագրեսիան: Ես նույնիսկ չէի կարող որեւէ կերպ օգնել ուկրաինացիներին, քանի որ վճարային համակարգերը հեռացել են ՌԴ-ից, իսկ մեր քարտային փոխանցումները հսկվում էին: Ուկրաինային օգնելու համար մեզ կարող էր անգամ քրեական հետապնդում սպառնալ: Ընթացքում ինձ ավելի ու ավելի անհարմար էի զգում, հետո ինձ բռնեցին հանրահավաքի ժամանակ»,- նշում է նա: Լյուբովը պատմում է, որ երկար մտածելուց եւ բանակցելուց հետո վերջնական որոշում է կայացրել հեռանալ ՌԴ-ից: Իսկ ինչո՞ւ հենց Վրաստան. լրագրողը պատմում է. «2021 թվականի դեկտեմբերին ես Վրաստանում կոնֆերանսի էի մասնակցել: Պատերազմը սկսելուց հետո ես մտածում էի, թե ուր կարելի է գնալ. տարբերակներից էին Հայաստանը եւ Ղազախստանը: Սակայն այդ ժամանակ Հայաստան ավելի շատ մարդ էին գալիս, եւ իմ ընկերներից ասում էին, որ մարդիկ կոնկրետ չեն ունենում գնալու տեղ, իմ ընկերը նաեւ խուսափում էր մեկնել մի տեղ, որը լավ հարաբերություններ ունի ՌԴ-ի հետ՝ իր աշխատանքը հաշվի առնելով: Ղազախստանում ես ոչ մի անգամ չեմ եղել եւ դժվարությամբ էի պատկերացնում, թե ինչ երկիր է: Նաեւ շատ ծանոթներ կային Վրաստանում, եւ մենք ընտրեցինք հենց այս երկիրը»,- նշում է նա: Ընդդիմադիր լրագրողն այնքան էլ խնդիրների չի հանդիպել Վրաստանում, սակայն գներից դժգոհություններ, ամեն դեպքում, ուներ: «Գների առումով ամեն ինչ լավ է, բացի բնակարանների գներից: Մարդիկ տարբեր կերպ են վերաբերվում ինձ, մեծամասամբ՝ չեզոք: Ես խանութներում կամ այլ վայրերում արդեն փորձում են վրացերեն կամ անգլերեն խոսել, սակայն շատերը միանգամից սկսում են ռուսերեն խոսել: Մեր բնակարանի տերը շատ պատրաստակամ է: Բացի պատերին առկա հակառուսական գրառումներից, կես տարվա ընթացքում միայն 1-2 վատ դեպքի եմ ականատես եղել: Օրինակ՝ գարնանը տաքսու վարորդը հրաժարվեց ինձ սպասարկել: Ընդհանուր առմամբ, ինձ այստեղ ամեն ինչ դուր է գալիս՝ եւ բնությունը, եւ ճարտարապետությունը. չկա ավելորդ բյուրոկրատիա»,- հավելեց նա: Լյուբով Պոպովենցը ArmLur.am-ի հետ զրույցում պատմում է, որ աշխատում է հեռավար, եւ իր գործընկերները եւս դուրս են եկել ՌԴ-ից: Ի վերջո, ՌԴ-ում ընդդիմադիր լրագրող լինելն անվտանգ չէ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

«Վոստստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

01.11.2022 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍԱԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետ–յալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍ-ԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2480935:

Մ Մեկնարկային գին՝ 5,760,000 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍ-ԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2161076:

Մ Մեկնարկային գին՝ 4,640,000 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍ-ԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2626848:

Մ Մեկնարկային գին՝ 2,000,000 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2140468:

Մ Մեկնարկային գին՝ 1,680,000 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2290379:

Մ Մեկնարկային գին՝ 2,450,000 ՀՀ դրամ:

Լոտ 6 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Երեւանյան փողոց, հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2186432:

Մ Մեկնարկային գին՝ 1,120,000 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍ-ԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2430110:

Մ Մեկնարկային գին՝ 7,400,000 ՀՀ դրամ:

Լոտ 8 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍ-ԲԱՆԿ» ՓԲԸ եւ Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Ելենա Շաշիբեկի Մելքոնյանին ու Սմբաթ Խաչիկի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա Օհանովի փողոց 40 շենք, 30 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 23032016-01-0102:

Մ Մեկնարկային գին՝ 25,117,500 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2183736:

Մ Մեկնարկային գին՝ 2,230,000 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «FORD» մակնիշի, TRANZIT 2.4 TD տիպարի, 2000թ. արտադրության, 104 PP 11 պետհամարանիշով, կարմիր գույնի, բեռնատար տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ WF0LXXGBFLYC10424, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

Մ Մեկնարկային գին՝ 2,465,000 ՀՀ դրամ:

Լոտ 11 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «MITSUBISHI» մակնիշի, MONTERO SPORT 3.0 տիպարի, 2000թ. արտադրության, 104 LL 11 պետհամարանիշով, սեւ գույնի, ունիվերսալ տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ JA4LS21HXYP038422, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

Մ Մեկնարկային գին՝ 1,700,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ

«ՕՐԵՐՈՎ ՉԵՆՔ ԼՈՂԱՑԵԼ». ԺԱՆՆԱ ՎԵԼԻՑՅԱՆ

Դերասանուհի Ժաննա Վելիցյանը ArmLur.am-ի հետ զրույցում պատմել է, թե ինչպես են հայտնվել դերասաններ Իննա Խոջամիրյանն ու Գոռ Հակոբյանը համատեղ «Ճիշտ այդպես» նախագծում, ինչպես են անցել նկարահանումները, եւ ինչ փորձություններ միջով են անցել:

Ժաննայի խոսքով՝ նախագծում նկարահանվելու առաջարկը ստացել է Իննա Խոջամիրյանից: Նա հիմնական գաղափարը եւ որոշակի մանրամասներ ներկայացնելուց հետո միանգամից տվել է հաղորդմանը մասնակից դառնալու իր դրական պատասխանը:

«Անկեղծ կլինեմ, դժվարություններն այնքան շատ էին, չգիտեմ անգամ՝ որից սկսել: Օրերով չենք լողացել, չենք սանրվել անգամ: Դերասանուհու համար, ով ամեն օր գեղեցիկ հագնված ու խնամված գնում է թատրոն՝ փորձի, այս ամենը, մեղմ ասած, շոկային էր: Որպես ֆիզիկական դժվարություն՝ կառանձնացնեմ սար բարձրանալը վազքով եւ ցեխաջրով լի փոսի մեջ հայտնվելը: Պահ էր գալիս՝ ամեն ինչ այնքան իրական էր դառնում, այնքան շոշափելի, պարզապես մոռանում էինք, որ ամբողջ ընթացքը նկարահանվում է: Իհարկե, հեշտ չէր նման պայմաններում ապրելը, նկարահանվելը, բայց այն էմոցիաները, որոնք ստացա այդ օրերի ընթացքում, անմոռանալի են»,- ժպիտով հիշում է դերասանուհին:

Հարցին՝ նկարահանող խմբի կամ դերասանական անձնակազմի հետ խմդիրներ եղել են, Ժաննան միանգամից շտապում է ընդգծել, որ թիմում իսկապես ամեն ինչ անցել է ջերմության ու համերաշխության մթնոլորտում.

«Իրինան, D'Litte-ը եւ ես թիմակիցներ էինք, շատ եմ սիրել աղջիկներին: Չեմ չափազանցի, եթե ասեմ, որ խնդիրներ մեր թիմում իսկապես չեն եղել: Իրինան վախ ուներ բարձրությունից, մի վայրկյան անգամ ձեռքը բաց չենք թողել. եթե պետք է եղել, քայլել ենք իր հետ հավասար, նստել ու շնչել իր հետ հավասար ու փորձությունը հաղթահարել՝ ձեռք ձեռքի բռնած»:

Դերասանուհի Ժաննա Վելիցյանի կարծիքով՝ նման նախագծերը կարող են հզոր մոտիվացիա հանդիսանալ բոլոր այն մարդկանց համար, որոնք երկմտանքի մեջ են՝ արժե արդյոք ստանալ մինիմալ զինվորական պատրաստվածություն, թե ոչ:

Ստացած նամակների քանակից եւ մեկնաբանություններից պարզ է դառնում, որ իսկապես պիտանի աշխատանք ենք արել՝ մոտիվացնող եւ ուսուցանող:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԲԱՑՈՒՄ

ՇԵՔՍՊԻՐՅԱՆ 16-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Հոկտեմբերի 17-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնում կարմիր գորգի պատշոնական արարողությամբ մեկնարկեց Երեւանի Շեքսպիրյան 16-րդ միջազգային թատերական փառատոնը:

Ինչպես ամեն տարի, այս տարի էլ թատերական իրադարձությունը Հայաստանում համախմբել է մշակութային ոլորտի լավագույն մասնագետներին ամբողջ աշխարհից: Պայմանավորված սեպտեմբերի 13-ին Հայաստանի սահմանին Ադրբեջանի կողմից իրականացրած ագրեսիայով՝ փառատոնը ստանձնել է եւս մեկ կարեւորագույն առաքելություն՝ միջազգային հանրությանը իրազեկել մեր երկրի խնդիրների մասին՝ կոչ անելով «փրկել մշակույթն ու դադարեցնել ագրեսիան»: Փառատոնի տոմսերը կվաճառվեն, իսկ ստացված ողջ հասույթը կուղղվի բարեգործության:

«Այս տարի փառատոնը միտված է քաղաքականության. բացի մշակութային մեծ հրավառությունից, մենք նաեւ շատ կարեւոր առաքելություն ենք իրականացնում: Սեպտեմբերի 13-ին սկսված ծանր օրերից հետո մեր գլխավոր հովանավոր «ՄԵՆՔ» բարեգործական հասարակական կազմակերպության հետ որոշեցինք, որ պետք է ունենանք նաեւ ակցիա, որպեսզի մեր ձայնը լսելի դառնա միջազգային հանրության համար»,- նշեց փառատոնի տնօրեն Կարո Բալյանը:Այս տարի Շեքսպիրյան փառատոնը կհյուրընկալի ավելի քան 250 մասնակցի եւ հյուրի Իտալիայից, Հունգարիայից, Ռումինիայից, Ղազախստանից, Իրանից, Բուլղարիայից, Ռուսաստանից, Վրաստանից եւ Ֆրանսիայից: Երեւանյան 11 բեմահարթակում կցուցադրվի ավելի քան 19 ներկայացում՝ 18 թատերախմբի մասնակցությամբ: Թատերական իրադարձության հեղլայներն են Սանկտ-Պետերբուրգի պատանի հանդիսատեսի թատրոնի «Ջմեռային հեքիաթ» (Ռուսաստան) եւ IM Perfect թատերախմբի «Ռոմեո եւ Ջուլիետ» (Իտալիա) ներկայացումները: Ներկայացում կցուցադրվի նաեւ Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնի բեմում: Նովոռոսիյսկի դրամատիկական թատրոնը (Ռուսաստան) կներկայացնի «Լիր արքան»: Փառատոնի շրջանակում կանցկացվի նաեւ հատուկ ծրագիր՝ FestOFF խորագրով, որը նախատեսված է ուսանողների եւ անկախ թատերախմբերի համար: Շեքսպիրյան փառատոնը կտեւի մինչեւ հոկտեմբերի 22-ը ներառյալ. այն անցկացվում է «ՄԵՆՔ» բարեգործական հասարակական կազմակերպության հովանավորությամբ եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԴԵՄՔ

Swarovski ապրանքանիշի ստեղծագործական տնօրեն Ջովաննա Էնգելբերտը ներկայացրել է նոր գովազդային արշավը, որի դեմքը մոդել Բելլա Հադիդն է:

Լուսանկարներում Բելլան փերիի տեսք ունի՝ թեւերին փոխարինող ժապավեններով: Մոդելը կրում է բազմաթիվ թեւնոցներ եւ վզնոցներ՝ կողքին ամանորյա աստղեր:

«Բելլան շատ բազմակողմանի կերպար է, որը խուսափում է սահմաններից եւ կանոններից: Նա հեշտությամբ անցում է կատարում սպորտայինից դեպի գլամուրային ոճին՝ պահպանելով ինքնավստահությունը»,- ասել է Էնգելբերտը:

Ապրանքանիշի գլխավոր գործադիր տնօրեն Ալեքսիս Նասարդն ասել է, որ նոր արշավն ուղղված է երկու նախաձեռնությունների՝ Creators Lab եւ Swarovski Created Diamonds նախագծերի զարգացմանն ու ընդլայնմանը: Նա կարծում է, որ ապրանքանիշի կողմից արտադրված ադամանդները, ծագումնաբանությունից բացի, ոչնչով չեն տարբերվում բնականներից:

ՀԵՌՔԵԼ Է ԼՈՒՐԵՐԸ

Մադրիդի «Աթլետիկոյի» արգենտինացի գլխավոր մարզիչ Դիեգո Սիմեոնեն հերքել է լուրերը, թե զրուցել է անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» 37-ամյա պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուի հետ եւ նրան հրավիրել իր ղեկավարած թիմ:

«Ես երբեք չեմ խոսել Ռոնալդուի հետ «Աթլետիկո» տեղափոխվելու թեմայով, երբեք: Չեմ պատկերացնում ինձ «Ռեալում», Ռոնալդուին էլ չեմ պատկերացնում «Աթլետիկոյում»»,- Սիմեոնեի խոսքը մեջբերում է AS-ը:

52-ամյա մասնագետը «Աթլետիկոն» գլխավորում է 2011 թվականից:

ՀԱՋՈՐԴ ՆՊԱՏԱԿ

Իսպանիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր Մադրիդի «Ռեալի» ֆրանսիացի հարձակվող Քարիմ Բենզեման աշխարհի լավագույն ֆուտբոլիստի «Ոսկե գնդակ» մրցանակին արժանանալուց հետո խոսել է հաջորդ նպատակի մասին:

«Հպարտ եմ, որ մորս տված խոստումները կատարում եմ: Ես նախկինի նման ունեմ հավակնություններ: Կցանկանայի դառնալ աշխարհի չեմպիոն:

Նպատակս Ֆրանսիայի հավաքականի հետ Քաթարում հնարավոր ամեն ինչ անելն է եւ աշխարհի չեմպիոն դառնալը»,- Բենզեմայի խոսքը մեջբերում է RMC Sport-ը:

Աշխարհի առաջնությունը Քաթարում կանցկացվի նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 18-ը: Խմբային փուլում Ֆրանսիայի մրցակիցները կլինեն Ավստրալիայի, Դանիայի եւ Թունիսի հավաքականները:

Դիդիե Դեշամի գլխավորած թիմը կփորձի պաշտպանել չորս տարի առաջ Ռուսաստանում նվաճած տիտղոսը: Բենզեման անցած առաջնությանը չի մասնակցել:

● *Հոկտեմբերի 23-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Խմորումներ» սթենդափը: Տոմսերի արժեքը՝4000-8000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Կարեն Կիրակոսյան (34 տարեկան)

Մշակութային Արժեքների Փորձագիտական Կենտրոն

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը, բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում: Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է ՀՀ կառավարության՝ 2007թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն: Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները /3 օրինակ/: Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է քաղաքացիական կացության ակտային գրանցումն անվավեր ճանաչելու հիմքը:

Տաթեւիկ Ռաֆաելյան (26 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական կացության ակտային գրանցումն անվավեր ճանաչելու հիմքերն են՝

1) հայտնաբերվել է միեւնույն անձի վերաբերյալ կազմված քաղաքացիական կացության երկու նույն տեսակի ակտային գրանցում,

2) քաղաքացիական կացության ակտային գրանցումը կատարվել է կեղծ փաստաթղթերի կամ սուտ տեղեկությունների հիման վրա,

3) կատարվել է այն անձի դիմումի հիման վրա, որը իրավասու չէր ներկայացնելու այլ անձի կամքի արտահայտությունը՝ լիազորագրի կամ էլեկտրոնային դիմումի շրջանակներում,

4) առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացիական կացության ակտային գրանցումը անվավեր ճանաչելու համար պետական տուրք նախատեսված չէ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Վերջապես երեկվանից մայրաքաղաքում մեկնարկեցին էտման աշխատանքները, որոնք կիրականացվեն 2 ուղղությամբ՝ սանիտարական եւ սաղարթի ձեւավորման:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.10.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: